# Ը.00.01 - ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## Տնտեսագիտության մեթոդաբանություն

**Տնտեսագիտության տեսության փիլիսոփայական, էթիկական և մեթոդաբանական հիմքերը:** Առարկայի և մեթոդի միասնությունը տնտեսագիտության տեսության մեջ: Մեթոդաբանության ընտրության խնդիրը: Պոզիտիվ և նորմատիվ տնտեսագիտություն: Նորմատիվային տնտեսագիտությունը և տնտեսական քաղաքականությունը: Մեթոդաբանական մոնիզմ և պլուրալիզմ: Մեթոդաբանական անհատականություն և ամբողջականություն: Մեթոդաբանական ունիվերսալիզմ և ռելյատիվիզմ: Կոնվենցիոնալիզմ:

Տնտեսագիտական տեսությունների էթիկական նախադրյալները: Ազգային տնտեսագիտական մտածելակերպի առանձնահատկությունները:

**Տնտեսագիտության տեսության պարադիգմի էվոլյուցիան:** «Գիտական պարադիգմի» և «գիտահետազոտական ծրագրի» հասկացությունները (Տ. Կուն և Ի. Լակաթոս): Կոշտ միջուկը և գիտական վարկածները: Տնտեսագիտության տեսության պարադիգմի էվոլյուցիայի պատճառներն ու ուղղությունները:

**Միջառարկայական փոխազդեցությունները տնտեսագիտության մեջ:** Տնտեսագիտության տեսության կենտրոնական դերը տնտեսական գիտությունների համակարգում: Տնտեսագիտության տեսությունը և հասարակական գիտությունները: Տնտեսագիտության տեսությունը և բնական գիտությունները: Միջառարկայական փոխազդեցության բովանդակությունը, իմաստը և իրականացման ձևերը:

**Տեսական տնտեսագիտական հետազոտությունների սկզբունքներն ու մեթոդները:** Գիտելիքի ստացման հաջորդականությունը՝ դիտարկում, ընդհանրացում, եզրակացություններ: Տնտեսական դիտարկումներ՝ էմպիրիկ և վիճակագրական մեթոդներ:

Ընդհանրացման մեթոդներ: Վերացական տրամաբանական մեթոդներ (վերլուծություն (անալիզ) և համադրություն (սինթեզ), մակածություն (ինդուկցիա) և արտածում (դեդուկցիա), գիտական վերացարկման մեթոդ): Պատճառահետևանքային մեթոդը: Դիալեկտիկական մեթոդ: Վերացականից դեպի կոնկրետ վերելքի սկզբունքը: Տրամաբանականի և պատմականի միասնությունը:

Մոդելավորման մեթոդներ: Վերլուծական (տեսական) և ֆունկցիոնալ մոդելներ: Ստատիկ և դինամիկ մոդելներ: Մաթեմատիկական, ստատիկ, գրաֆիկական մեթոդներ:

Գործիքայնականությունը, օպերացիոնալիզմը, իրավիճակային վերլուծությունը տնտեսագիտական հետազոտություններում:

Համակարգային մտածելակերպը և համակարգային վերլուծությունը:

**Գիտականության ստանդարտներն և տնտեսագիտական գիտելիքների գնահատման չափանիշները:** Գիտական արդյունքների էմպիրիկ ստուգման անհրաժեշտությունը: Գործնականության կարևորությունը տնտեսագիտության համար: Էմպիրիզմը, համակարգայնությունը՝ որպես գիտականության ստանդարտների և

տնտեսագիտական գիտելիքների գնահատման չափանիշների արտահայտում: Տնտեսագիտության կանխատեսման գործառույթը:

## ԲԱԺԻՆ 1. ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Թեմա 1. Սպառողական ընտրության տեսություն

Սպառման գործընթացի օրինաչափությունները և բարիքի օգտակարությունը: Սպառողի նախասիրությունները: Սպառողի ընտրություն: Սպառողի նախասիրությունների աքսիոմներ: Նախապատվությունների օրինակներ: «Անտարբեր» բարիքների և հակաբարիքների հասկացությունը:

Սահմանային օգտակարության տեսության երկու ուղղությունները. Օգտակարության քանակական և կարգային տեսությունները:

*Օգտակարության քանակական վերլուծություն:* Բարիքի սուբյեկտիվ արժեքը, ընդհանուր և սահմանային օգտակարություն: Գ. Գոսենի առաջին օրենքը և օգտակարության ֆունկցիան: Սպառողի վարքագծի տեսության հիմնական պոստուլատները: Սպառողի բարեկեցության մաքսիմիզացումը և Գ. Գոսենի երկրորդ օրենքը:

*Օգտակարության կարգային վերլուծություն:* Անտարբերության կորերը և քարտեզը: Փոխարինման սահմանային նորմը (MRS): Նախապատվությունների գրաֆիկական նկարագրություն: Սպառողի նախասիրությունները և անտարբերության կորերը (նորմալ կորեր, փոխարինող ապրանքների և լրացնող ապրանքների դեպքերը): Կոտրված նախապատվություններ: Դիսկրետ ապրանքներ: Սահմանային օպտիմումի հասկացությունը: Ուռուցիկ և ոչ ուռուցիկ նախապատվություններ: Մեկից ավելի հպման դեպք:

Տարբեր նախապատվությունների համար օգտակարության ֆունկցիաների կառուցում՝ բացարձակ փոխարինելի, բացարձակ փոխլրացնող, քվազիգծային նախապատվություններ, Քոբ-Դուգլասի նախապատվությունները:

Բյուջետային սահմանափակում: Արտաքին գործոնների ազդեցություն: Սպառողի հավասարակշռությունը՝ օպտիմալ ընտրության մասին որոշման ընդունում: Սպառողի ավելցուկ:

Սպառողի տեղայնային շուկայական հավասարակշռություն: Մարշալի (Վալրասի) պահանջարկի ֆունկցիան, օգտակարության աննուղակի ֆունկցիան:

«Եկամուտ-սպառում» կորը և դրա կապը Էնգելի կորի հետ: «Գին-սպառում» կորը և դրա կապը պահանջարկի կորի հետ: Ցածր կարգի ապրանքների և Գիֆենի ապրանքների յուրահատկությունների մեկնաբանումը անտարբերության կորերի կիրառմամբ:

Օգտակարության մաքսիմիզացման, սպառողի օպտիմումի, փոխարինման նորմի և եկամտի սահմանային օգտակարության մաթեմատիկական վերլուծությունը: Ռոյի ինքնությունը: Սպառման տեսության երկակիությունը և դրա պատկերումը Լագրանժի մեթոդով: Սպառման տեսության երկակիությունը Քոբ-Դուգլասի օգտակարության ֆունկցիայի օրինակով: Եկամտի և փոխարինման էֆեկտների մաթեմատիկական վերլուծությունը: Շեփարդի լեմման: Սլուտսկու հավասարումը: Եկամտի և փոխարինման էֆեկտների գրաֆիկական պատկերումը անտարբերության կորերի կիրառմամբ: Գիֆենի ապրանքների դեպքը: Եկամտի և փոխարինման էֆեկտները ըստ Հիքսի:

Բացահայտ նախապատվություններ: Նախապատվությունների վերակառուցում: Բացահայտ նախապատվությունների թույլ աքսիոմ: Բացահայտ նախապատվությունների ուժեղ աքսիոմ:

Ռիսկի և անորոշության տեսություն: Նեյման-Մորգենշտերնի օգտակարության տեսության տարրեր: Ռիսկին վերաբերմունքը: Ռիսկի քանակական գնահատում:

## Թեմա 2. Արտադրության տեսություն: Կատարյալ մրցակցության շուկայի մեխանիզմը

Արտադրությունը և արտադրական գործոնները: Տնտեսագիտական վերլուծության մեջ կիրառվող արտադրական ֆունկցիաները: Քոբ-Դուգլասի, CES, գծային և Լեոնտևի արտադրական ֆունկցիաները և դրանց հատկությունները: Մաթեմատիկական և երկրաչափական մեկնաբանումը: Արտադրության տեխնոլոգիան: Մասշտաբի էֆեկտի տեսակները:

Մեկ փոփոխական գործոնով արտադրություն: Արտադրական գործոնի միջին և սահմանային պրոդուկտները: Գծապատկերային մեկնաբանում: Նվազող սահմանային արտադրողականության օրենքը: Տեխնոլոգիական բարելավումների ազդեցությունը: Շահույթի մաքսիմիզացումը մեկ փոփոխական արտադրական գործոնի պարագայում: Իզոպրոֆիտային կորեր: Բացահայտ շահութաբերություն: Հնարավոր տեխնոլոգիայի կառուցումը:

Երկու փոփոխական գործոններով արտադրություն: Տեխնոլոգիական փոխարինման սահմանային նորմը: Երկարաժամկետ հատվածում արտադրողի ծախքերի մինիմիզացման մաթեմատիկական մեկնաբանումը: Ծախքերի բացահայտ մինիմիզացում: Ծախքերի մինիմիզացման թույլ աքսիոմը: Տեխնոլոգիական փոխարինման սահմանային նորմի ու արտադրության և ծախքերի տեսությունում երկակիության մաթեմատիկական մեկնաբանումը: Արտադրության և ծախքերի տեսությունում երկակիության մաթեմատիկական մեկնաբանումը Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի օրինակով:

## Թեմա 3. Շուկայական հավասարակշռություն

*Շուկայական պահանջարկի վերլուծություն:* Ապրանքների պահանջարկի տեսակների դասակարգում: Պահանջարկի ֆունկցիան և պահանջարկի օրենքը: Պահանջարկի գործոնները: Պահանջարկի կորը և դրա կազմաձևը: Պահանջարկի ծավալի փոփոխություն և պահանջարկի փոփոխություն: Եկամտի էֆեկտը և փոխարինման էֆեկտը: Պահանջարկի փոփոխության վրա ազդող գործոնները: Անհատական և շուկայական պահանջարկ: Նորմալ և ցածր դասի ապրանքների պահանջարկ, Գիֆենի ապրանքներ, Վեբլենի էֆեկտ, սնոբի էֆեկտ, մեծամասնությանը միացման էֆեկտ:

*Շուկայական առաջարկի վերլուծություն:* Առաջարկի ֆունկցիան և առաջարկի օրենքը: Առաջարկի գործոնները: Առաջարկի կորը և դրա կազմաձևը տարբեր ժամանակահատվածների համար (ակնթարթային, կարճաժամկետ և երկարաժամկետ): Առաջարկի ծավալի փոփոխություն և առաջարկի փոփոխություն: Առաջարկի փոփոխության վրա ազդող գործոնները:

*Շուկայական հավասարակշռության հաստատում. ստատիկ մոդել: Շուկայական հավասարակշռության հաստատման մեխանիզմը:* Առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունը: Շուկայական գնագոյացման մեխանիզմ: Հավասարակշռության գին և հավասարակշռության ծավալ: Գնի հավասարակշռման գործառույթը: Շուկայական հավասարակշռությունից շեղում. շուկայում ապրանքների ավելցուկ և պակասուրդ: Անհավասարակշռության դեպքեր: Հավասարակշռության գնի և հավասարակշռության քանակի փոփոխություն՝ պահանջարկի ու առաջարկի փոփոխության պարագայում են (4 պարզ և 4 բարդ դեպքեր, առաջարկի և պահանջարկի ուղղահայաց և հորիզոնական կորեր):

Սպառողի ավելցուկ և արտադրողի ավելցուկ: Առաջարկի և պահանջարկի գծային և ոչ գծային կորերի համար ավելցուկի հաշվարկման մեթոդ:

«Անտեսանելի ձեռքի» (Ա. Սմիթ) մեխանիզմը հավասարակշռության գների ձևավորման մեջ և պետության միջամտությունը շուկայական գնագոյացման մեջ («առաստաղ»՝ գնի վերին սահման և «հատակ»՝ գնի ստորին սահման): Ուղղակի և անուղղակի հարկերի, սուբսիդիաների և դոտացիաների, ներմուծման տուրքերի, ներմուծման քվոտաների ազդեցությունը հավասարակշռության գնի և հավասարակշռության քանակի վրա: «Անդառնալի կորուստները» և դրանց հաշվարկման մեթոդները:

## Թեմա 4. Ոչ կատարյալ մրցակցության շուկաների մեխանիզմը

Կատարյալ մրցակցության շուկայի թերությունները: Շուկայական կառուցվածքի ձևը որոշող բնութագրերը: Մուտքի խոչընդոտների խնդիրը: Շուկայական իշխանություն՝ Լերների գործակիցը: Շուկայական կառուցվածքների հիմնական տեսակները՝ կատարյալ մրցակցային շուկա, զուտ մենաշնորհ, օլիգոպոլիա, ապրանքի բազմազանեցմամբ մենաշնորհային մրցակցություն:

*Մենաշնորհի* տնտեսական էությունը և տեսակները: Մենաշնորհային իշխանության աղբյուրները: Մենաշնորհի շահույթի մաքսիմիզացումը կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածում: Մենաշնորհը և հասարակական բարեկեցության կորուստները:

Օպտիմալ արտադրության ծավալի որոշում մի քանի ձեռնարկություն ունեցող ֆիրմայի համար: Մենաշնորհի պահանջարկի կորի շեղումները: Հարկումը մենաշնորհ դիրքի առկայության պարագայում:

Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ արտադրող ֆիրմայի շահույթի մաքսիմիզացման խնդիրը:

Մենաշնորհի առաջարկը կարճաժամկետ հատվածում: Մենաշնորհի առաջարկը երկարաժամկետ հատվածում: Մենաշնորհ շահույթի էությունը: Գնագոյացման «բութ մատի» կանոնը՝ մենաշնորհային իշխանություն ունեցող ֆիրմաների համար:

Բնական մենաշնորհ: Բնական մենաշնորհների գործունեության կարգավորման հիմնական կանոնները:

Գնային խտրականությունը որպես մենաշնորհ իշխանության իրականացման միջոց: Գնային խտրականության ձևերը: Գնագոյացման սկզբունքները՝ շուկայական իշխանության պարագայում: Սպառողի ավելցուկի յուրացում: Առաջին կարգի գնային խտրականություն (գծապատկերային մեկնաբանումով): Երկրորդ կարգի գնային խտրականություն: «Բութ մատի» կանոնը երրորդ կարգի գնային խտրականության իրականացման պարագայում: Երկփուլային վճարում: Ժամանակային գնային խտրականությունը և գնագոյացումը գագաթնակետային պահանջարկի

ժամանակահատվածում: Ապրանքների հավաքածուների գնագոյացում: Խառը հավաքածու: Կապակցում:

*Մոնոպսոնիան* որպես գնորդի իշխանության ձև: Մրցակցող գնորդի և մրցակցող վաճառողի միջև անալոգիան: Մոնոպսոնիստական ֆիրմայի կողմից գնման օպտիմալ ծավալի վերաբերյալ որոշում: Մոնոպսոնիստական իշխանության աղբյուրները: Մոնոպսոնիստական իշխանության հասարակական ծախքերը:

Շուկայի մենաշնորհացման տնտեսական հետևանքները: Հասարակության «զուտ կորուստները» մենաշնորհներից: X-անարդյունավետություն: Մենաշնորհը և առաջընթացը:

Մենաշնորհների գործունեության կարգավորում՝ օրենսդրական միջոցառումներ, տնտեսական միջոցառումներ:

*Օլիգոպոլիա*՝ փոխգործակցող վաճառողների շուկան և դուոպոլիան, որպես դրա առանձնահատուկ դեպք. հասկացությունը և տարածվածությունը, հիմնական պատճառները: Արտադրության ծավալի և գնի մասին որոշում: Ոչ գնային մրցակցությունը օլիգոպոլիայի պայմաններում: Օլիգոպոլիաների գնագոյացման ռազմավարությունը: Օլիգոպոլիան խաղերի տեսության տեսանկյունից: «Բանտարկյալի երկընտրանքը»:

Համագործակցական (կոոպերատիվ) վարքագծի մոդելներ՝ բացահայտ գաղտնի համագործակցություն՝ կարտելներ, լուռ համագործակցություն՝ առաջնորդություն և կայունություն, արգելափակող գնագոյացման մոդել: Ոչ համագործակցային վարքագծի մոդելներ՝ պահանջարկի կոտրված կորը և գերիշխող ֆիրմայի մոդելը:

Կուռնոյի մոդելը: Գծային պահանջարկի կորի մոդելը: Առաջին քայլի առավելությունը՝ Շտակելբերգի մոդելը: Գնային մրցակցությունը համասեռ ապրանքների պարագայում՝ Բերտրանի մոդելը: Գնային մրցակցությունը բազմազանեցված ապրանքների պարագայում:

Շուկա մուտք գործելու սահմանափակումներ: Արտադրական հզորությունների մեջ ներդրումներ: Սահմանափակող գնագոյացում:

Մրցակցային քաղաքականություն: Հորիզոնտալ միաձուլումներ: Գաղտնի համաձայնություն: Հիմնական մոդել: Գաղտնի համաձայնությանը նպաստող գործոններ: «Մտրակի և բլիթի» ռազմավարություն: Ոչ կատարյալ տեղեկատվություն: Պատժի մեղմացում: Մանրակրկիտ ստուգում (զննում/սկրինինգ):

Ուղղահայաց սահմանափակող պայմանագրեր: Կրկնակի հավելավճար: Արտաքին էֆեկտները արտադրողների և դիստրիբյուտորների միջև հարաբերություններում: Արտաքին էֆեկտների ինտերնալիզացման մեթոդներ: Ուղղահայաց սահմանափակող պայմանագրերի ազդեցությունը մրցակցության վրա: Շուկայում ուղղահայաց սահմանափակումների ձևեր. ոչ գծային գներ, առավելագույն / նվազագույն գների պահպանում, ապրանքների ծավալի քանակական ամրագրում, «բացառիկ տարածքի» համակարգ, դիստրիբյուտորների քանակի սահմանափակում, ապրանքների առաջխաղացման ջանքերի համատեղ ֆինանսավորում, կապակցված վաճառքներ:

*Մենաշնորհային մրցակցություն:* Մենաշնորհային մրցակցության շուկայի յուրահատկությունները: Ապրանքի տարբերակումը (բազմազանեցումը)՝ որպես շուկայական իշխանության աղբյուր: Ապրանքային տարբերակման (բազմազանեցման) բնույթն ու դերը: Պահանջարկը մենաշնորհային մրցակցության պայմաններում: Արտադրության ընտրությունը սահմանափակ մենաշնորհային իշանության պայմաններում՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում:

Արդյունավետության խնդիրը մենաշնորհային մրցակցության շուկայում: Ոչ գնային մրցակցություն և գովազդ:

## Թեմա 5. Ապրանքի տարբերակումը (բազմազանեցումը) և գովազդը

Ապրանքի հորիզոնական տարբերակումը, ազդեցությունը գների մրցակցության և վաճառողների հավասարակշիռ քանակի վրա (Հոթելինգի և Սալոփի մոդելների օրինակով): Ուղղահայաց արտադրանքի տարբերակումը, ազդեցությունը մրցակցության և շուկայի կառուցվածքի վրա: Որակի մասին տեղեկատվության ասիմետրիա ուղղահայաց տարբերակված ապրանքների շուկայում: Որակի ազդանշաններ, դրանց արդյունավետության պայմանները: Գովազդի այլընտրանքային բացատրությունները. տեղեկատվություն, ազդանշաններ, մրցակցություն:

Ապրանքի տարբերակումը և ֆիրմայի շուկայական իշխանությունը: Լանկաստերի արտադրանքի հորիզոնական տարբերակման մոդելը: Արտադրանքի ուղղահայաց տարբերակումը: Սաթոնի մոդելը: Գովազդը՝ որպես արտադրանքի տարբերակման գործոն: Ապրանքանիշերի տնտեսական բնույթը: Գովազդի ծախսերի օպտիմալ մակարդակ: Դորֆման-Շտայների մոդելը:

## Թեմա 6. Նորարարություն, հետազոտություն և զարգացում

Շուկայի կառուցվածքը և նորարարությունների խթանները: Շումպտերի հիփոթեզը: Մենաշնորհի և կատարյալ մրցակցի նորարարության խթանները: Նորարարությունը մուտքի սպառնալիքների պայմաններում: Շումպտերյան վարկածի էմպիրիկ ստուգում: Արտոնագրեր և արտոնագրերի պաշտպանություն: Արտոնագրի օպտիմալ տևողությունը: Արտոնագրերի օպտիմալ ծածկույթ: Սպառման ցանցային էֆեկտները: Պահանջարկի գործառույթը՝ սպառման ցանցային էֆեկտների տեսանկյունից: Սպառման ցանցային էֆեկտների ազդեցությունը հավասարակշռության վրա: Սպառման ցանցային էֆեկտները և մրցակցությունը: Սպառման ցանցային էֆեկտները և շուկաների կառուցվածքը: Մրցակցային քաղաքականության խնդիրները սպառման ցանցային էֆեկտներով շուկայում:

## Թեմա 7. Հանրային բարիքներ և արտաքին էֆեկտներ

*Հանրային բարիքներ:* Հանրային բարիքների բնութագրերը: Մասնավոր և ընդհանուր հավասարակշռությունը հանրային բարիքների տնտեսության մոդելում: «Անտոմս ուղևորի» խնդիրը: Հանրային բարիքների տարբեր տեսակները: Լինդալի հավասարակշռությունը: Պահանջարկի հայտնաբերում: Քլարկի հարկը: Քլարկի հարկի հետ կապված խնդիրները:

Արտաքին էֆեկտների տեսություն: Արտաքին էֆեկտների բնույթը. կողմնակի ազդեցությունների ծախսերը և օգուտները: Արտաքին էֆեկտների դրսևորման ձևերը և դրանց հետևանքները: Արտաքին գործոնների ինտերնալիզացիա: Քոուզ-Ստիգլերի թեորեմ: Արտաքին էֆեկտների կարգավորում: Արտանետումների իրավունքների շուկա:

## Թեմա 8. Ընդհանուր հավասարակշռությունը կատարյալ շուկաների ամբողջական համակարգ ունեցող տնտեսության մեջ

Կատարյալ մրցակցության գաղափարը և Վալրասի հավասարակշռությունը: Հավասարակշռության հատկությունները ըստ Վալրասի: Համախառն փոխարինելիություն, բացահայտ նախապատվությունների թույլ աքսիոմ և հավասարակշռության եզակիություն:

Հավասարակշիռ գների կառուցվածքը և Զոննենշայն-Մանթել-Դեբրեի թեորեմը: Տեղային եզակիության պայմանները: Հավասարակշռությունը քվազիգծային տնտեսություններում (մասնակի հավասարակշռություն): Անորոշության պայմաններում ընդհանուր հավասարակշռություն: Էրոու-Դեբրեի մոդելը՝ պայմանական ապրանքներով և շուկաների ամբողջական համակարգով: Պայմանական բարիքների և ակտիվների մոդելներում հավասարակշռության արդյունավետությունը:

## ԲԱԺԻՆ 2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Թեմա 1. Սպառում, խնայողություններ և ներդրումներ

Սպառում և խնայողություն: Դինամիկ (բազմամյա) բյուջետային սահմանափակում: Բյուջետային սահմանափակումները երկամյա մոդելում: Բյուջետային սահմանափակման գրաֆիկական պատկերում: Տնային տնտեսությունների որոշումների կայացում: Մ. Ֆրիդմանի մշտական եկամտով սպառման տեսությունը: Մշտական եկամտի մոդելի էմպիրիկ հիմնավորում: Ֆ. Մոդիլիանիի սպառման և խնայողությունների կյանքի ցիկլի մոդել: Ռ. Հոլլի «պատահական քայլքի» հիփոթեզը: Ռիկարդոյի համարժեքության թեորեմը: Սպառումը անորոշության պայմաններում: Համախառն սպառումը և ազգային խնայողությունների մակարդակը: Սպառում, խնայողություն և տոկոսադրույք:

Ներդրումներն ու դրանց առանձնահատկությունները: Ներդրումների ծախսերի չափման խնդիրը: Ներդրումների հիմնական մոդելը և դրա ընդլայնումները: Պաշարների կուտակում: Ներդրումային ծախսերի էմպիրիկ վերլուծություն: Ներդրումային գործընթացների արագացուցիչի (աքսելերատորի) մոդել: Կարգավորող ծախսերի մոտեցում:

Տոբինի ներդրումների q-տեսությունը: Ֆազային դիագրամներ: Թամբի հետագիծ: Վարկերի ռացիոնալացում: Տոբինի q-մոդելի հետևությունները: Արտադրության ծավալի փոփոխության, տոկոսադրույքի մշտական և ժամանակավոր բարձրացման, հարկերի փոփոխության և ներդրումային վարկի ներդրման հետևանքները:

Անորոշության պայմաններում ներդրումային որոշումների կայացում, տեղեկատվության անհամաչափ բաշխման դերը: Մոդիլիանի-Միլլերի թեորեմ: Կարգավորող ծախսերով ներդրումների մոդել: Դիսկրետ ժամանակով մոդելում ֆիրմայի խնդիրը: Մոդելը փոփոխությունը շարունակական ժամանակի դեպքում:

Ներդրումները բաց տնտեսության մեջ: Խնայողությունները և ներդրումները փոքր բաց և մեծ բաց տնտեսություններում: Ֆիսկալ քաղաքականության և ընթացիկ հաշվի միջև կապը: Երկրի բազմամյա բյուջետային սահմանափակում: Միջազգային փոխառությունների և վարկավորման խնդիրը:

### Թեմա 2. Փող, ակտիվների շուկա և գնաճ: Ֆինանսական համակարգ

Փողը և փողի շուկան: Փողի քանակական տեսություն: Փողի պահանջարկ և առաջարկ: Փողի պահանջարկի տեսություն կառուցման նախադրյալներ. տոկոսադրույքներ և գներ; տնային տնտեսության բյուջետային սահմանափակումն ու փողը: Բաումոլ-Տոբինի մոդելը:

Ֆինանսական շուկաների ինստիտուցիոնալ ասպեկտները: Ֆինանսական շուկաներ և գործիքներ: Բանկային և ոչ բանկային ֆինանսական հաստատություններ: Ֆինանսական միջնորդների գործունեության կարգավորում: Ռիսկին հակման տարբեր աստիճանների դեպքում արժեթղթերի օպտիմալ պորտֆելի ընտրություն: Հավասարակշռության հաստատում կապիտալի շուկայում: Միջազգային տոկոսադրույքային արբիտրաժի հասկացությունը: Տոկոսադրույքների ժամանակային կառուցվածքը:

## Թեմա 3. Հավասարակշռությունը IS-LM մոդելում: Ներքին մակրոտնտեսական հավասարակշռության նոր մոտեցում

IS կորը. հավասարակշռությունը իրական շուկայում: LM կորը. հավասարակշռությունը ակտիվների շուկայում: Հավասարակշռությունը IS-LM մոդելում: Առաջարկի ցնցումների (շոկերի) ազդեցությունը մոդելի վրա: Մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա: Պետական ծախսերի ավելացման հետևանքները: Հարկերի կրճատման էֆեկտը: Փողի առաջարկի ավելացման էֆեկտը: «Ներդրումային ծուղակ» և «իրացվելիության ծուղակ»: Ուղղահայաց LM կորի դեպք:
IS-LM և AD-AS մոդելների մաթեմատիկական տարբերակները: Համախառն պահանջարկի և համախառն առաջարկի հավասարակշռության որոշումը գծային մակրոտնտեսական մոդելի միջոցով. դասական դեպք, ծայրահեղ քեյնսյան և նորմալ դեպքեր:

IS-LM մոդելի քննադատությունը՝ Ջոն Հիքսի մոտեցումները: Ներքին մակրոտնտեսական հավասարակշռության տեսության նոր մոտեցում: Առանց LM կորի «IS-LM» մոդելի տեսություն: IS-MP մոդելը: IA-AD մոդելը:

## Թեմա 4. Մակրոտնտեսական քաղաքականությունը բաց տնտեսությունում: Փոքր բաց տնտեսության մոդել: Երկարաժամկետ հավասարակշռության մոդել

Մակրոտնտեսական ցուցանիշները բաց տնտեսությունում և դրանց չափումը: Վճարային հաշվեկշիռ: Փոխարժեք և փոխարժեքի քաղաքականություն: Գնողունակության պարիտետ: Ներքին և արտաքին հավասարակշռության մոդելներ: Ապրանքների և ծառայությունների շուկա: Փողի շուկա: Արտարժույթի շուկա: Փոքր բաց տնտեսության կարճաժամկետ մոդել: Փոքր բաց տնտեսության քեյնսյան մոդելը: Համախառն պահանջարկի կարգավորումը բաց տնտեսությունում: Երկարաժամկետ հավասարակշռության մոդելը փոքր բաց տնտեսությունում: Հավասարակշռության փոփոխությունները հարկաբյուջետային, դրամավարկային, ներդրումային և արտաքին առևտրային քաղաքականությունների իրականացման պայմաններում: Հավասարակշռության փոփոխությունը օտարերկրյա պետությունների կողմից իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության ազդեցության ներքո:

**Թեմա 5. Արտաքին տնտեսական հավասարակշռությունը կապիտալի կատարյալ և անկատար շարժունակության պայմաններում: IS-LM-BP մոդելը: «Անհնարին երրորդություն»: Արդի մակրոտնտեսագիտության վեց գլուխկոտրուկներ**

Մանդել-Ֆլեմինգի մոդելը: Ընդհանուր տնտեսական հավասարակշռության մոդելը: Մակրոտնտեսական քաղաքականությունը բաց տնտեսությունում՝ ֆիքսված և լողացող փոխարժեքների պարագայում՝ արդյունքների համեմատություն: Առևտրային քաղաքականության ազդեցությունը: Մոդելի ընդլայնումը՝ երկրի ռիսկայնության փոփոխականի պարագայում: Արժեզրկման քաղաքականության ազդեցությունը ֆիքսված փոխարժեքի պարագայում: Մոդելի հանրահաշվական ներկայացում՝ ֆիքսված և լողացող փոխարժեքների պարագայում:

Կապիտալի անկատար շարժունակություն: IS-LM-BP մոդելի կառուցում: Ներածական թեորեմ: Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ֆիքսված փոխարժեքի ռեժիմի ներքո: Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ազդեցությունը լողացող փոխարժեքի ռեժիմի ներքո: Ազգային արժույթի արժեզրկման էֆեկտը: IS-LM-BP և Մանդել-Ֆլեմինգի մոդելների արդյունքների համեմատական վերլուծություն: «Անհնարին երրորդություն»:

Երկարաժամկետ հավասարակշռությունը մեծ բաց տնտեսության համար՝ կապիտալի անկատար շարժունակություն. լողացող և ֆիքսված փոխարժեքների դեպքեր:

Արդի մակրոտնտեսագիտության վեց գլուխկոտրուկներ: 1. Շեղում հօգուտ ներքին արտադրության ապրանքների: 2. Ֆելդշտեյնի և Հորիոկայի «խնայողություններ-ներդրումներ» գլուխկոտրուկը: 3. Պորտֆելի «ներքին շեղման» գլուխկոտրուկը: 4. Սպառման միջազգային կորելյացիայի գլուխկոտրուկը: 5. Գնողունակության պարիտետի գլուխկոտրուկ: 6. «Փոխարժեքի անջատման» գլուխկոտրուկ:

**Թեմա 6. Համախառն առաջարկը ու գնաճի և գործազրկության միջև կապը: Համախառն պահանջարկի և համախառն առաջարկի դինամիկ մոդել**

Համախառն առաջարկի կորի կառուցում. կոշտ գների մոդել և ոչ լիակատար տեղեկատվության մոդել: Ֆիլիպսի կորի դուս բերումը կարճաժամկետ համախառն առաջարկի կորից:

Դինամիկ AD-AS մոդելի կառուցում: AD կորի կառուցում: Դրամավարկային քաղաքականության կանոնը: Թեյլորի կանոնը: AS կորի կառուցում և հավասարակշռության հաստատում: Կարճաժամկետ և երկարաժամկետ հավասարակշռության հաստատումը և հնարավոր տեղաշարժերը: Ցնցումների ազդեցությունը: Մոդելի էմպիրիկ ստուգում:

**Թեմա 7. Տնտեսական աճ: Տնտեսական աճի դինամիկ մոդելներ: Տնտեսական աճի ստատիկ մոդելներ: Սոլոուի մոդելը**

Արդի տնտեսական աճի նախադրյալներ: Արդի տնտեսական աճի առանձնահատկությունները: Տնտեսական աճի աղբյուրները: Սոլոուի մոդելը: Մոդելի նկարագրություն: Կայուն (ստացիոնար) հավասարակշռության հաստատում: Խնայողությունների մակարդակի ազդեցությունը եկամտի և տնտեսական աճի վրա: Բնակչության թվաքանակի աճի տեմպերի փոփոխության ազդեցությունը:

Տեխնոլոգիական փոփոխությունները Սոլոուի մոդելում: Ֆելփսի կուտակման ոսկե կանոնը: Սոլոուի մնացորդը: Աճի տեմպերը կայուն (ստացիոնար) վիճակին անցման փուլում: Սոլոուի մոդելի կիրառման պարագայում պետական քաղաքականության հիմնական նպատակները՝ խնայողությունների սահմանային նորմի, ներդրումների բաշխման, արտադրողականության աճի և կապիտալի կուտակման սահմանային տեմպի, տեխնոլոգիական առաջընթացի խթանման վրա:

Տնտեսական աճի դինամիկ մոդելներ: Հարոդ-Դոմարի մոդելը:

## Թեմա 8. Էնդոգեն աճի մոդելների ակնարկ: Միկրոտնտեսական հիմքերով տնտեսական աճի մոդելներ: Էնդոգեն աճի տեսություններ

Էնդոգեն աճի մոդելների առաջացման նախադրյալները և դրանց անհրաժեշտությունը: Մենքյու-Ռոմեր-Ուայլի մոդել (MRW մոդել): Էրրոուի մոդելը: Յուզավա-Լուկասի մոդելը: Կուտակված կապիտալի մոդել (AK մոդել): Ռոմերի մոդելը: Ստոկիի մոդելy: Գրոսման-Հելփմանի մոդելը: Կալդորի փաստերը:

Գիտական և տեխնոլոգիական առաջընթացի աճի տեմպերը բացատրող մոդելներ: Ապրանքների աճող բազմազանության մոդել: Որակի աստիճանների մոդել: Տեխնոլոգիաների փոխառության մոդելը:

## Թեմա 9. Ռամսեյի մոդելը: Խաչվող սերունդների մոդել

*Ռամսեյի մոդելը*. Մոդելի կառուցման հիմունքները: Տնային տնտեսությունների համար օպտիմումի որոնում: Ընկերությունների համար օպտիմումի որոնում: Ընդհանուր տնտեսական հավասարակշռության սահմանումը: Հավասարակշռությունը կենտրոնացված վերահսկողության ժամանակ: Շուկայական մոդելի և կենտրոնացված կառավարման մոդելի լուծումները. դրանց համարժեքությունը: Քեյնս-Ռամսեյի կանոնը: Տրանսվերսալության պայմանը:

Կայուն վիճակի (ստացիոնար) հայտնաբերումը: Խնայողությունների նորմայի դինամիկան: Մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան: Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցայի համար լուծումը:

Կոնվերգենցիան Ռամսեյի մոդելում: Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի դեպքը: Տնտեսական քաղաքականության իրականացման հետևանքով մոդելի փոփոխություններ. հարկաբյուջետային քաղաքականություն:

*Խաչվող սերունդների մոդել.* Մոդելի կառուցման հիմունքները: Տնային տնտեսությունների համար օպտիմումի որոնում: Ընկերությունների համար օպտիմումի որոնում: Ընդհանուր տնտեսական հավասարակշռության սահմանումը: Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցայի և օգտակարության լոգարիթմական ֆունկիցայի համար լուծումներ: Հաստատուն (ստացիոնար) վիճակի սահմանումը: Հավասարակշռության հետագծերի արդյունավետության պայմանները: Դինամիկ անարդյունավետության հնարավորությունը: Հետաձգված սպառման էֆեկտ:

Պետության հարկաբյուջետային քաղաքականության վրա ազդեցությունը: Մոդելի հավասարակշռության փոփոխություն՝ սերունդների միջև ալտրուիստական հարաբերությունների ենթադրության պարագայում:

## Թեմա 10. Բիզնես ցիկլեր և մակրոտնտեսական քաղաքականություն: Տեղեկատվության ոչ լիակատարություն և փողի իրական էֆեկտներ: Նոր քեյնսական բիզնես ցիկլի մոդելներ: Ապրանքների և ռեսուրսների շուկաներում անկատարություններ:

Տնտեսական ցիկլերի որոշ ընդհանուր բնութագրեր: Պրոցիկլիկ, հակացիկլիկ և ացիկլիկ ցուցանիշներ: Կարևորագույն մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունների ցիկլային բնույթը: Տրենդ և ցիկլային տատանումներ: Առաջատար, ուշացող և չեզոք ցուցանիշների համակարգը: Իմպուլսա-տարածական մոտեցումը բիզնես ցիկլերի բացատրման համար: Բազմապատկիչ-արագացուցիչի մոդելը ժամանակային լագերով և առանց ժամանակային լագերի: Քաղաքական ցնցումները որպես բիզնես ցիկլերի խթանման աղբյուր:

*Բիզնես ցիկլերի նոր դասական տեսությունները. Իրական բիզնես ցիկլի տեսություն.*

Իրական բիզնես ցիկլերի տեսության հիմնական ենթադրությունները և նախադրյալները: Արտադրողականության փոփոխության ցնցումները որպես գործարար ցիկլերի շարժիչ ուժ: Մոդելի տրամաչափում:

*Նոր քեյնսական բիզնես ցիկլի մոդելներ:* Գների և աշխատավարձերի անճկունության վերաբերյալ ենթադրություններ՝ աշխատանքային պայմանագրեր, աննուղակի պայմանագրեր, արդյունավետ աշխատավարձ: Անվանական և իրական «կոշտություններ»: Մենյուի ծախքեր: Ֆիլիպսի կորը նոր քեյնսական տեսության տեսանկյունից:

Տեղեկատվության ոչ լիակատարությունը որպես իրական «կոշտությունների» աղբյուր: Ֆինանսական շուկաներում տեղեկատվության ասիմետրիկություն:

## Թեմա 11. Մարկոտնտեսական քաղաքականության իրականացման հիմնախնդիրները

Մակրոտնտեսական քաղաքականության բազային տեսությունը: Պետության մակրոտնտեսական քաղաքականության թիրախային ցուցանիշները և գործիքները: Թինբերգենի մոդելը:

*Գործազրկություն և գնաճ:* Գնաճ. հարկաբյուջետային և դրամական ասպեկտները: Գնաճի առաջացման, զարգացման պատճառներն ու գործոնները: Գնաճը և գործազրկությունը կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածում: Գնաճի դինամիկ մոդելները. «աշխատավարձ-գներ» պարույրը: Ռացիոնալ սպասումների հայեցակարգ. «գնաճ-գործազրկություն» երկընտրանքը: Գնաճի սոցիալ-տնտեսական հետևանքները: Հակագնաճային քաղաքականություն: Սպասումներ և մակրոտնտեսական քաղաքականություն: Ֆրիդմանի մոդելը: Լուկասի մոդելը: Ադապտիվ սպասումներ և գնաճ: Լուկասի քննադատությունը: Ռացիոնալ սպասումների խաղային մոդել:

*Հարկաբյուջետային քաղաքականություն:* Պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի խնդիրը: Հարկաբյուջետային քաղաքականության խթանման արդյունքները: Գնաճային հարկ և սենյորաժ:

*Դրամավարկային և արժութային քաղաքականություն:* Դրամավարկային քաղաքականության ռեժիմները: Դրամավարկային ինքնավարության բացակայություն,

փողի առաջարկի թիրախավորում, փոխարժեքի թիրախավորում, գնաճի թիրախավորում, անուղղակի գների կայունության խարիսխ, գնաճի հեշտացված թիրախավորում, անվանական խարսխի թույլ ռեժիմ:

*Մակրոտնտեսական քաղաքականության ժամանակային անհամապատասխանության խնդիրը:*

*Պետության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ներդաշնակեցման խնդիրը:*

## ԲԱԺԻՆ 3. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

### Թեմա 1. Մերկանտիլիզմ և նեոմերկանտիլիզմ

Ուշ միջնադարի տնտեսական միտքը: Գրեշամի օրենքը: Դրամական առաջին տեսությունները (փողի քանակական տեսություն): Ն. Կոպեռնիկոս, Ժ. Բոդեն:

Մերկանտիլիզմի առաջացման պատմական պայմանները: Մերկանտիլիստական դարաշրջանի գաղափարախոսությունը, քաղաքականությունը և տեսությունը: Մերկանտիլիզմի առանձնահատկությունները. նորմատիվ տնտեսական վերլուծության մշակում և պոզիտիվ տնտեսական գիտելիքների կուտակում: Մերկանտիլիզմի առարկան և մեթոդը:

Մերկանտիլիզմը որպես գիտական հայեցակարգ (առևտրային բուրժուազիայի ուսմունք) և որպես պետական քաղաքականություն: Մերկանտիլիզմի զարգացման երկու փուլ՝ վաղ և ուշ: Հարստության հայեցակարգ: Փողի հաշվեկշռի տեսություն և առևտրի մնացորդի գաղափար: Փողի մեկնաբանումը: Պրոտեկցիոնիզմ (հովանավորչություն):

Առանձին երկրներում մերկանտիլիզմի առանձնահատկությունները. Մեծ Բրիտանիա (Վ. Ստաֆորդ, Թ. Ման), Ֆրանսիա (Ժ. Բ. Կոլբեր, Ա. Մոնկրետյեն) և Իտալիա (Ֆ. Սկարուֆի, Ա. Սեռա, Ջոն Լոն և նրա համակարգը): Մերկանտիլիստների հիմնական նվաճումները: Մերկանտիլիզմի քննադատությունը: Մերկանտիլիզմը և արդիականությունը: Տնտեսական բարեփոխումները անցումային երկրներում և մերկանտիլիզմը:

### Թեմա 2. Քաղաքատնտեսություն դասական դպրոցի նախորդները

Մերկանտիլիզմի քննադատությունը: Քաղաքատնտեսության դասական դպրոց. ծագումը, բնութագրիչները, դրա զարգացման փուլերի առանձնահատկությունները:

Առաջին փուլ. Նոր տնտեսական մտածողության ձևավորում: Անգլիացի տնտեսագետների տնտեգիտական տեսակետները (Ու. Պետտի, Դ. Նորս, Ջ. Լոք, Բ. Մանդեվիլ, Ջ. Մեսսի, Դ. Հյում, Ջ. Ստյուարտ, Բ. Ֆրանկլին): Ֆրանսիացի տնտեսագետների տնտեսական ուսմունքները: (Պ. Բուագիլբեր, Ռ. Կանտիլոն): «Էսսե առևտրի բնույթի մասին» Ռ. Կանտիլոն:

Ֆիզիոկրատները և պոզիտիվ վերլուծության մշակումը: «Laisser faire» սկզբունքը: «Տնտեսագետների» (ֆիզիոկրատների) դպրոցի ձևավորումը: Ֆ. Քենեի տնտեսական տեսակետները: «Տնտեսական աղյուսակ» և վերարտադրության վերլուծություն, «մաքուր

արտադրանքի», արտադրական աշխատուժի, փողի, դասերի, կապիտալի խնդիրները և համախառն ազգային արդյունքի վերաբաշխումը: Ա. Տյուրգոի տնտեսական տեսակետները:

## Թեմա 3. Քաղաքատնտեսության դասական դպրոցը. Ա. Սմիթ

Քաղաքատնտեսության դասական դպրոցի երկրորդ փուլի առանձնահատկությունները: Տնտեսագիտության առաջացումը որպես դասական գիտություն տեսակ: Ա. Սմիթի աշխարհայացքի ձևավորումը:

Ա. Սմիթ՝ քաղաքատնտեսության դասական դպրոցի հիմնադիր: «Հետազոտություն ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին» գրքի կառուցվածքը: քաղաքատնտեսության ձևավորումը որպես գիտություն: Ա. Սմիթի հետազոտությունների առարկան և մեթոդաբանությունը: Շուկայական համակարգի գործունեության հիմնական սկզբունքներն ըստ Ա. Սմիթի: «Տնտեսական մարդու» մոդելը և շուկայի «անտեսանելի ձեռքը»: «Տնտեսական լիբերալիզմ» հասկացությունը: Ա. Սմիթը տնտեսական օրենքների, դասերի, հարստության աճի աղբյուրների, աշխատանքի բաժանման, փոխանակման, փողի, արժեքի, կապիտալի և դրա կառուցվածքի, արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքի, հարկման սկզբունքների և բացարձակ առավելության սկզբունքի մասին:

## Թեմա 4. Դասական դպրոցի հետևորդներն և ընդդիմախոսները

Քաղաքատնտեսության դասական դպրոցի երրորդ և չորրորդ փուլերի առանձնահատկությունները: Դ. Ռիկարդոն որպես Ա. Սմիթի գաղափարների հետևորդ և ընդդիմախոս: Դ. Ռիկարդոյի «Քաղաքատնտեսության և հարկման հիմունքներ» գիրքը:

Ռիկարդոյի հետազոտության առարկայի և մեթոդաբանության առանձնահատկությունները: Արժեքի աշխատանքային տեսության զարգացում: Բաշխման տեսություն: Արժեքի աշխատանքային տեսության զարգացումը: Բաշխման տեսությունը: Աշխատավարձի և շահույթի դինամիկան: Ռենտայի տեսություն. Ջ. Ստյուարտ - Ժ. Ա. Տյուրգո – Ռիկարդո: Համեմատական առավելության սկզբունքը:

Ժ.Բ. Սեյի տնտեսագիտական տեսակետները: Արտադրության երեք գործոնների տեսություն: Արժեքի և եկամուտների մեկնաբանություն: Սեյի շուկաների օրենքի էությունը:

Թ. Մալթուս. ազգաբնակչության տեսություն: Արժեքի և եկամտի տեսությունը: Վերարտադրության տեսություն: Նոր մալտուազիանիզմ: Ֆ. Բասթիայի և Ն. Սենիորի տնտեսագիտական տեսությունները:

Ջ. Ս. Միլլ՝ առաջին պոզիտիվիզմի ներկայացուցիչ, դասական քաղաքատնտեսության ամփոփողը: Նրա ներդրումը տնտեսագիտության մեջ: Ջ. Ս. Միլլի քաղաքատնտեսության առարկան և մեթոդները: «Քաղաքատնտեսության հիմքերը և սոցիալական փիլիսոփայության մեջ դրանց կիրառման որոշ տեսակետները» գրքի կառուցվածքը: Օրենքների համակարգ: Ջ. Ս. Միլլի ռեֆորմիզմը:

***Դասական տնտեսագիտության հակառակորդները:*** Պատմական դպրոց. հին, նոր և երիտասարդ (նորագույն) գերմանական դպրոցի բնութագրիչները և հիմնական

գաղափարները: (Ֆ. Լիս, Վ. Ռոշեր, Բ. Գիլդեբրանդ, Կ. Կնիս, Գ. Շմոլեր, Վ. Զոմբարտ, Մ. Վեբեր).

Ամերիկյան դպրոցի հիմնադիր Գ.Չ. Քերիի տնտեսական քաղաքատնտեսության վերաբերյալ: Տնտեսական ռոմանտիզմ: Ս. Սիսմոնդիի և Պ. Պրուդոնի ուսումնքները և ներդրումը:

## Թեմա 5. Մարքսիզմի տնտեսագիտական համակարգը

Սոցիալիստական և կոմունիստական գաղափարների ստեղծման և զարգացման փուլերը: Ուտոպիական սոցիալիզմ (Ռ. Օուեն, Ս. Սենտ-Սիմոն, Ս. Ֆուրյե):

Մարքսիզմի առաջացումը: Կ. Մարքսը որպես դասական դպրոցի ներկայացուցիչ: Մարքսիզմի երեք աղբյուրները: Կ. Մարքսի քաղաքական տնտեսագիտությունը: Պատմաբանության սկզբունքը: Սոցիալ-տնտեսական ձևավորման տեսությունը, բազիսի և վերնաշենքի հայեցակարգը, արտադրական ուժերի և արտադրական հարաբերությունների կատեգորիաները, դիալեկտիկայի սկզբունքները: Դասակարգերը և դասակարգերի պայքարի տեսություն: Շահագործման մասին ուսմունք:

Կ. Մարքսի «Կապիտալի» կառուցվածքն ու տրամաբանությունը: Կ. Մարքսի «Կապիտալի» հիմնական գաղափարները. արժեքի և փողի աշխատանքային տեսություն, աշխատանքի երկակի բնույթի ուսմունքը, հավելյալ արժեքի և կապիտալի հայեցակարգ, շահույթի նորմայի ուսուցում, վերարտադրության տեսությունը և կապիտալիստական շահույթի նորմի ուսմունքը, դիֆերենցիալ և բացարձակ ռենտայի ուսմունքն և այլն: Կապիտալիզմի տնտեսական քննադատություն:

Մարքսիզմը և սոցիալիզմը գործնականում:

## Թեմա 6. Մարժինալիզմի տեսությունը և մեթոդաբանությունը

Հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները Արևմուտքի երկրներում XIX դարի վերջին:

Մարժինալիզմի նախորդները՝ մարժինալ վերլուծության հիմնախնդիրները: Մարժինալիստական հեղափոխություն. երկու փուլ: Մարժինալիզմի մեթոդաբանական առանձնահատկությունները: Արժեքի սահմանման երեք հիմնական մոտեցումները:

Ավստրիական դպրոցի մեթոդաբանության առանձնահատկությունները: Կ. Մենգեր և Է. Բյոմ-Բավերկ (բարիքների և փոխանակման ուսուցում): Է. Բյոմ-Բավերկի կապիտալի և տոկոսի տեսությունը: Ֆ. Վիզերի այլընտրանքային ծախսերի տեսություն:

Մարժինալիզիմի անգլիական դպրոցի բնութագիրը: Ու. Ս. Ջեվոնս. օգտակարությունն ու հակաօգտակարությունը արժեքի տեսության մեջ: Ֆ. Էջուորթ (անտարբերության կորեր):

## Թեմա 7. Տնտեսական մտքի նոր դասական համակարգը

Մարժինալիզմի լոզանյան դպրոցի բնութագիրը և դրա առաջատար ներկայացուցիչները:

Լ. Վալրասի ներդրումը. ընդհանուր մակրոտնտեսական հավասարակշռության մոդել: Վ.Պարետո: Ընդհանուր տնտեսական հավասարակշռության հայեցակարգ: Օպտիմումը ըստ Վ. Պարետոյի:

Կ. Ուիքսել՝ մարժինալիզիմի շվեդական դպրոցի հիմնադիր, նրա գաղափարներն ու ներդրումը:

Ա. Շումպետերի տնտեսական հայացքները որպես տնտեսագետ և պատմաբան:

Ա. Շումպետերի «Տնտեսական զարգացման տեսություն» գրքի նշանակությունը:

Ձեռնարկատիրություն և նորարարություն: Քեմբրիջի դպրոց: Ա. Մարշալի ներդրումը տնտեսագիտության մեջ, որպես նոր դասական տեսության և միկրոտնտեսագիտության հիմնադիր: Մարշալի խաչը: Մարշալի սինթեզը, օգտակարության և պահանջարկի տեսություն, արտադրության ծախքեր և առաջարկ: Տնտեսագիտության մեջ առաձգականության և ժամանակի գործոնի հասկացությունները: Սպառողի ավելցուկ:

Ջ. Բ. Կլարկ. մարջինալիզմի ամերիկյան դպրոցի հիմնադիր, արտադրական գործոնների սահմանային արտադրողականության տեսություն:

## Թեմա 8. Տնտեսագիտության ինստիտուցիոնալ պարադիգմի էվոլյուցիան

Ինստիտուցիոնալիզմ: Առաջացման պատճառները, էությունը, փուլերը, մեթոդական և ընդհանուր սկզբունքները, ներդրումը տնտեսագիտության տեսության զարգացման մեջ:

Ամերիկյան (հին, վաղ) ինստիտուցիոնալիզմի բնութագիրը և դրա ամենաակնառու ներկայացուցիչները (Ու. Համիլտոն, Տ. Վեբլեն, Ջ. Կոմմոնս, Ու. Միտչել): Տ. Վեբլենի ինստիտուցիոնալիզմի սոցիալ-հոգեբանական (տեխնոկրատական) բնույթը, դրա հիմնական դրույթները: Վեբլենի էֆեկտ: «Դատարկապորճ դասի տեսություն»:

Ջ. Կոմմոնսի ինստիտուցիոնալալիզմի սոցիալական և իրավական ուղղությունները: «Գործարքի» հասկացությունը որպես սոցիալ-տնտեսական հարաբերությունների համընդհանուր ձև:

Ու. Միտչելի տնտեսական հայացքները որպես էմպիրիկ ուղղության ներկայացուցիչ:

Հետպատերազմյան ինստիտուցիոնալիզմ: Ջ. Գելբրեյտը որպես ժամանակակից ինստիտուցիոնալալիզմի առաջնորդ: «Նոր արդյունաբերական հասարակություն» (1973), «Տնտեսագիտություն և հասարակության նպատակները» (1973): «Հասուն կորպորացիայի» մասին ուսմունքը: Տեխնոհամակարգի և արդյունաբերական համակարգի հայեցակարգերը:

Ֆ. Պերուն և սոցիալական դպրոցը Ֆրանսիայում: «Երեք տնտեսության» տեսությունը. հավասարակշռող ուժ, ներդաշնակ աճ, գլոբալ տնտեսություն:

Վ. Ռոստոուի աճի փուլերի տեսություն: Ռ. Արոնի «Միասնական արդյունաբերական հասարակության» հայեցակարգը: «Հետարդյունաբերական հասարակության» տեսությունների առանձնահատկությունը Դ. Բելի, Օ. Թոֆլերի, Զ. Բժեզինսկու, Ռ. Հեյլբրոների աշխատություններում:

Նեոինստիտուցիոնալիզմ: Քոուզի ֆիրմայի տեսությունը: Գործարքային ծախքերը: Ուիլյամսոնի պայմանագրերի տեսությունը: Սեփականության իրավունքի տնտեսագիտության տեսություն («իրավունքների փունջ»):

Հասարակական ընտրության տեսություն (Ջ. Բյուքանան, Գ. Տալլոք): «Պետական ֆիասկո» հասկացությունը:

Նոր տնտեսական պատմությունը (Դ. Նորտ) որպես նեոինստիտուցիոնալիզմի առանձին ոլորտ: Հայացք պատմությանը որպես ինստիտուտների էվոլյուցիայի: «Տնտեսական հեղափոխություններ» հայեցակարգը:

Ինստիտուտների դերը տնտեսական զարգացման գործում: Ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներ՝ տարբերություններ, փոխազդեցություն, ինստիտուտների տնտեսական դերը: Էքստրակտիվ և ինկլյուզիվ ինստիտուտներ: Դ. Աճեմողլուի մոտեցումները:

Պայմանագրերի տեսությունը: Դայմոնդի պարադոքսը:

## Թեմա 9. Քեյնսականություն, նոր քեյնսականություն, հետքեյնսականություն

Քեյնսականության և նորազատականության (նեոլիբերալիզմ) առաջացումը:

Նեոդասական տեսության քննադատություն: Քեյնսյան հեղափոխություն: Ջ. Մ Քեյնսը՝ մակրոտնտեսագիտության հիմնադիր: «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատությունը որպես տնտեսագիտության մեջ շրջադարձային պահ: Ջ. Մ Քեյնսի առարկան և սկզբունքորեն նոր մեթոդաբանությունը: Քեյնսի մոդելը որպես «կարճաժամկետ հատվածի» մոդել: Արդյունավետ պահանջարկի և պետական կարգավորման տեսությունը՝ Քեյնսի հայեցակարգի կենտրոնական տարր: Սպառումը որպես Քեյնսի դոկտրինի կենտրոնական մաս: Վարքագծի հոգեբանական դրդապատճառները: Ներդրումների և խնայողությունների գործոնները: Բազմապատկչի տեսություն: Քեյնսի տոկոսի և «իրացվելիության նախապատվության» տեսությունը: Պետության տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները:

Քեյնսականության զարգացումը: Ե. Դոմարի և Ռ. Հարրոդի նեոքեյնսյան աճի (տնտեսական դինամիկայի) տեսությունները: Փաստացի, երաշխավորված և բնական աճի տեմպերի հասկացությունները: Դինամիկ անհավասարակշռության մեխանիզմ:

«Նեոդասական սինթեզ». IS-LM (Հիքս-Հանսենի) մոդելը: Ֆիլիպսի կորը:

Հետքեյնսականություն. Ջ. Ռոբինսոնի և Պ. Սրաֆայի հայեցակարգերը:

Քեյնսը և արդիականությունը. Քեյնսի վերածնունդը և վերաիմաստավորումը (2007-2008 ճգնաժամը): Իռացիոնալության խնդիրը Ջ. Ակերլոֆի, Ռ. Շիլլերի աշխատություններում:

## Թեմա 10. Նորազատականության (նեոլիբերալիզմ) դպրոցը: Ֆրիդմենի մոնետարիզմը

Լոնդոնյան (Լ. Ֆոն Միզես, Լ. Ռոբինս, Ֆ. Ֆոն Հայեկ) և Ֆրայբուրգյան (Վ. Օյկեն, Վ. Գետ, Լ. Էրհարդ) դպրոցների առաջատար ներկայացուցիչների բնութագրերը և ներդրումը: «Սոցիալական շուկայական տնտեսություն» և տնտեսական քաղաքականություն հասկացությունը: Լ. Էրհարդի «Գերմանական հրաշքը»: Լ. Էրհարդի գիրքը՝ «Բարեկեցություն բոլորի համար»:

Չիկագոյի դպրոց (Մ. Ֆրիդմեն, Ա. Շվարց): Մ. Ֆրիդմենը որպես մոնետարիզմի պահպանողական տնտեսական տեսության դպրոցի առաջատար ներկայացուցիչ: Քեյնսականության քննադատություն: Մոնետարիզմի հիմնական պոստուլատները (գաղափարները): Մ. Ֆրիդմենի տեսությունը «գործազրկության բնական մակարդակի», սպառման վերլուծության, դրամական շրջանառության և դրամավարկային տեսության զարգացման պատմության, տնտեսության վրա փողի ազդեցության փոխանցման մեխանիզմի և տնտեսական կայունացման քաղաքականության մասին:

«Շոկային թերապիայի» ծրագիրը զարգացող երկրների համար: Մոնետարիզմի զարգացումը Կ. Բրունների, Ա. Մելցերի և այլոց աշխատություններում: Գլոբալ մոնետարիզմ (Գ. Ջոնսոն, Ռ. Մանդել):

## Թեմա 11. Էվոլյուցիոն տնտեսագիտություն

Էվոլյուցիոն մոտեցումը՝ որպես նոր դասական մոտեցման մեթոդաբանական այլընտրանք: Էվոլյուցիոն տեսության ձևավորում. էվոլյուցիոնիզմի ակունքները (Բ. Մանդևիլ, Ա. Սմիթ, Թ. Մալտուս), ավստրիական դպրոցը (Կ. Մենգեր, Ֆ. Հայեկ), նեո-շումպետերյան դպրոցը և ինստիտուցիոնալիզմը (Տ. Վեբլեն, Ա. Ալչյան):

Էվոլյուցիոն տնտեսսագիտության ուղղությունները՝ միկրոտնտեսական, մակրոտնտեսական և ինստիտուցիոնալ:

Ռ.Նելսոնի և Ս.Ուինթերի ֆիրմաների վարքագծի էվոլյուցիոն տեսությունը:

Ֆիրմաների էվոլյուցիոն ռազմավարություններ. հաճախականության խնդիրը: Տեխնիկական և տնտեսական էվոլյուցիայի հայեցակարգեր: Անցյալից կախվածության խնդիրը:

Էվոլյուցիոն տնտեսագիտության բանավեճային հարցերը:

## Թեմա 11. Վարքագծային տնտեսագիտությունը և դրա ուղղությունները

Վարքագծային տնտեսագիտության և դրա ուղղությունների ընդհանուր բնութագիրը: Վարքագծային տնտեսագիտության մեթոդաբանական սկզբունքները (Գ. Սայմոն):

Սահմանափակված ռացիոնալության հայեցակարգը և Ջ. Մարչի ու Ռ. Սայերթի ֆիրմայի վարքագծային տեսությունը: Որոշումների ընդունման կազմակերպչական մոդելը («աղբարկղի» մոդելը) (Կարնեգի-Մելոնի համալսարանի դպրոցը):

Վարքագծային ցիկլի տեսություն:

Հոգեբանությունը և վարքագծային տնտեսագիտություն: Իռացիոնալության խնդիրները տնտեսագիտության մեջ: Մ.Ալեյի, Ա. Ակերլոֆի, Դ. Կանեմանի, Վ. Սմիթի, Ռ. Շիլլերի, Ռ. Թալերի ներդրումը:

«Ալլեի» պարադոքսը և Կանեման-Տվերսկու հեռանկարների տեսությունը: «Խարիսխի էֆեկտ»: «Քոուզի թեորեմի» հերքումը:

Վարքագծային նոր մակրոտնտեսագիտություն: Ջ. Ակերլոֆը և Ռ. Շիլլերը (վստահություն, արդարություն, անազնվություն, դրամական պատրանքներ և «պատմություններ» (մարդկանց՝ որոշումներ կայացնելու միտումը, հիմնված ոչ թե տնտեսական հաշվարկների, այլ «խարիսխ պատմությունների» վրա):

Ռ.Թալերի հիմնական գաղափարները վարքագծային նոր տնտեսագիտության մեջ:

## Թեմա 12. Արդի տնտեսագիտության միասնականությունը և բազմազանությունը

Տնտեսագիտության պատմության երկու ուղղությունները: Հիմնական հոսք (մեյնսթրիմ)՝ դրա էվոլյուցիան և ճգնաժամը: Հետերոդոքս տեսություններ՝ տեսական և մեթոդաբանական առանձնահատկությունները: Տնտեսագիտության տեսության

կառուցվածքը պայմանավորող ինստիտուցիոնալ գործոնները: Տնտեսագիտական մտքի ազգային, մշակութային և այլ առանձնահատկությունները:

Տնտեսագիտության տեսության արդի ուղղությունները: Նեյրոտնտեսագիտություն և տնտեսական քաղաքականություն: Բիոէկոնոմիկա (կենսաէկոնոմիկա) և էկոնոֆիզիկա: Այլընտրանքային տեսություններ:

## Գրականության ցանկ*


1. Вэриан Х.Р. «Микроэкономика. Промежуточный уровень» // Учебник для ВУЗ-ов /Пер. с англ. ЮНИТИ, 1997.
2. Пиндайк Р., Рубинфельд Д., «Микроэкономика», Москва, Изд-во «Дело», 2001.
3. Ф. Коуэлл, «Микроэкономика. Принципы и анализ», Москва, Изд-во «Дело», 2011.
4. Дж. А. Джейли, Ф. Дж. Рени «Микроэкономика. Продвинутый уровень» // Учебник. Москва, Издательский дом ГУ-ВШЭ, 2011.
5. Черемных Ю.Н., «Микроэкономика. Продвинутый уровень» // Учебник. Москва, Изд-во «Инфра-М», 2011.
6. Verian Hal. R. «Microeconomic Analyses». 3rd edition.
7. Н.Л. Шагас, Е.А.Туманова. «Макроэкономика. Промежуточный уровень». Издательство МГУ. 2006.
8. Абель Э., Бернанке Б. «Макроэкономика». Издательство: СПб.: Питер 2012. 768 стр.
9. Дорнбуш Г., Фишер С. «Макроэкономика». М.: Инфра-М, 1997. 784 стр.
10. Сакс Дж., Ларрен Ф. М. «Макроэкономика. Глобальный подход». Дело, 2002. 848 стр.
11. Г. Мэнкью. «Макроэкономика». 7-ое издание. Worth Publishers. 2010. 641 стр.
12. David Romer, *Advanced Macroeconomics,* Fourth Edition, McGraw-Hill Series Economics, 2011.
13. Roberto J. Barro, Xavier I. Sala-i-Martin, *Economic Growth,* The MIT Press, 2nd edition, 2003.
14. Daron Acemoglu, *Introduction to Modern Economic Growth,* Princeton University Press, 2009.
15. Maurice Obstfeld, Kenneth S. Rogoff, *Foundations of International Macroeconomics,* The MIT Press, 1996.
16. Roberto J. Barro, *Macroeconomics,* 5th Edition, The MIT Press, 1997.
17. Е.А. Туманова, Н.Л. Шагас. «Макроэкономика. Элементы продвинутого уровня» – Инфра-М. 2004.
18. М. Блауг «Экономическая мысль в ретроспективе». / Пер. с англ. – М., 1995, гл. 1-10.
19. Е.М. Майбурд «Введение в историю экономической мысли. От пророков до профессоров». – М., 2000. 544 стр.
20. Я.С. Ядгаров История экономических учений // Инфра-М., 2000. 320 стр.
21. Мен Т. Богатство Англии во внешней торговле // Мировая экономическая мысль сквозь призму веков. Т.1., с. 153-160.
22. Петти В. Трактат о налогах и сборах. — В кн.: Антология экономической классики. В 2-х томах. Т. 1. – М.: 1991, с. 5-78.
23. Кенэ Ф. Избранные экономические произведения. – М.: Соцэкгиз. 1960. 551 стр.
24. Смит А. Исследование о природе и причинах богатства народов. Книга 1, гл. 1-11; книга 2, гл. 1-4; книга 4, гл. кн. 5, гл. 1, 2, 5.
25. Рикардо Д. Начала политической экономии и налогово¬го обложения (отдельные главы). — В кн.: Антология экономической классики. В 2-х томах. Т. 1, 1991, с. 397 - 473.

26. Шумпетер Й.А. История экономического анализа: В 3-х т./пер с анг. В.С.Автономова, Спб: Экономическая школа, 2001.(т.2, ч.3, гл .4,6).
27. Маркс К. Капитал. Т. 1-3 // Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. Т. 23-26.
28. Маркс К. Экономическо-философские рукописи 1844 года // Маркс К., Энгельс Ф. Соч. 2-е изд. Т. 42.
29. Маршалл А. Принципы экономической науки. М., Прогресс. 1993. Т.1, книга 1, гл. 1-4 (с. 56-106); книга 2, гл. 1-2 (с. 107-121).
30. Т.Веблен Теория праздного класса., М,1984, 194 стр.
31. Р. Нуреев Торстейн Веблен: взгляд XXI века // Вопросы экономики. 2007 (7) стр. 73-85.
32. КейнсДж.М. Общая теория занятости, процента и денег (1936): Пер. с англ. М., 1978.
33. Классика кейнсианства. В 2-х т./ Э.Хансен. – М., Экономика, 1997 (Р. Харрод. К теории экономической динамики. Экономические циклы и национальный доход).
34. Блауг М. 100 великих экономистов после Кейнса / Пер. с англ. под ред. М.А. Сторчевого. СПб.: Экономическая школа, 2008.
35. Джон Хикс «Стоимость и капитал» // Издательство «Прогресс», 1988. 488 стр.
36. Хайек Ф. Эффект Рикардо. Экономический расчет при социализме // Индивидуализм и экономический порядок. М. 2000. С. 177-200 // Хрестоматия по истории экономической мысли. Вып. XII: Дискуссия о социализме и теории экономических порядков. М., 2001.
37. Агапова И.И. История экономических учений. М.,2001, Л.13 и 14.
38. Хайек Ф. Пагубная самонадеянность – Издательство «Новости», М., 1992. 306 стр.
39. Фридман М. Основы монетаризма. Издательство «Теис», М., 2002, 175 стр.
40. Фридман М. Капитализм и свобода // «Новое издательство», М., 2006, 236 стр.
41. Аузан А. Институциональная экономика – М., 2006. 51 стр.
42. Коуз, Р. Фирма, рынок и право. – М. : Дело, 1993. 224 стр. **http://pavroz.ru/files/coasefirme.pdf**
43. Норт, Д. Институты и экономический рост // THESIS. Вып. 2. – М., 1993. 23 стр.
44. Норт, Д. Понимание процесса экономических изменений. М.: ИД ГУ-ВШЭ, 2010.
45. Дарон Асемоглу, Саймон Джонсон, Джеймс Робинсон. Институты как фундаментальная основа экономического роста. **http://www.research.by/webroot/delivery/files/ecowest/2006n1r01.pdf**
46. Дарон Аджемоглу, Джеймс А. Робинсон. Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. – М.: АСТ, 2015. – 720 с.
47. Эволюционная экономика // Истоки. Из опыта изучения экономики как структуры и как процесса. Под ред. Я. И. Кузьминова. — М.: ИД ГУ-ВШЭ, 2006.
48. Макашева Н. Эволюционная экономика: история и современность. – М., 2006
49. Ходжсон Дж. Эволюционная и институциональная экономика как новый мейнстрим? //Экономический вестник ростовского государственного университета, Том 6, № 2. 2008, с. 8–21.
50. Саймон Г. «Модели человека: социальная и рациональная». 1957.
51. Саймон ГА. Рациональность как процесс и продукт мышления // THESIS: теория и история экономических и социальных институтов и систем. 1993. Вып. 3. С. 16-38.
52. Дж. Г. Марч и Р. М. Сайерт «Поведенческая теория фирмы», 1963.
53. Акерлоф Дж, Р.Шиллер, Как человеческая психология управляет экономикой и почему это важно для мирового капитализма // пер.с англ. М., 2010.
54. Ариэли, Д. Позитивная иррациональность. Как извлекать выгоду из своих нелогичных поступков / Дэн Ариэли: пер. с англ. Павла Миронова. – М.: Манн, Иванов, и Фербер, 2010.

55. Канеман Д.  Думай медленно, решай быстро. – М., АСТ, 2013.
56. Канеман Д., Тверски А. Рациональный выбор, ценности и фреймы // Психологический Журнал, 2003,Т.24, № 4.
57. Р. Талер Новая поведенческая экономика.  М., 2017.
58. Беккер, Г. Человеческое поведение: экономический подход.  М., 2003.
59. Коландер Д. Экономическая наука нового тысячелетия: как она нашла свой путь и каков он? //**http://www.ecsocman.edu.ru/data/117/217/1218/3-Polterovich.pdf**
60. А.Д. Некипелов. Кризис в экономической науке-природа и пути преодоления.- Вестник РАН, 2019, том 89,  № 1, стр. 24-37.

*** Աղբյուրները ներկայացված են ըստ թեմաների հերթականության:**